

Մաքսիմ Զամշեվ

Մաքսիմ Զամշեվ – բանաստեղծ, արձակագիր, քննադատ, թարգմանիչ: Ծնվել է 1972 թվականին, Մոսկվայում: 1995 թվականին գերազանցությամբ ավարտել է Գնեսինների անվան երաժշտական ուսումնարանը: 2001 թվականին ավարտել է Ա.Մ. Գորկու անվան գրականության ինստիտուտը: Տասնմեկ բանաստեղծական և հինգ արձակ գրքերի հեղինակ է («Ընտրյալը» (2009), «Քարտ-բլանշ» (2015), «Գարուն ռեպորտյորի համար» (2017), «Կոնցերտմայստեր» (2020), «Ազատամիտները» (2023)): Լրագրողների միության անդամ է: 2017 թվականից «Լիտերատուրնայա գազետայի» («Գրական թերթ») գլխավոր խմբագիրն է: ՌԴ Նախագահին կից մարդու իրավունքների և քաղհասարակության զարգացման խորհրդի անդամ է: Պարգևատրվել է «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» II աստիճանի շքանշանով (2008) և I աստիճանի շքանշանով (2023), ինչպես նաև «Տպագրության և տեղեկատվության զարգացման ոլորտում ունեցած վաստակի համար» պատվո նշանով (ԱՊՀ միջխորհրդարանական խորհրդաժողովի կողմից) տպագրության և տեղեկատվության ոլորտում գաղափարների իրականացման և ԱՊՀ երկրների միասնական տեղեկատվական տարածության ստեղծման ու զարգացման մեջ մեծ ներդրում ունենալու համար: Դափնեկիրն է Նիկոլայ Ռուբցովի, Նիկոլայ Գումիլյովի, Ալեքսանդր Գրիբոեդովի, Դմիտրի Կեդրինի և Սերգեյ Միխալկովի անվան գրական մրցանակների: 2017-ին առաջադրվել է «Նացիոնալնի բեստսելլեր» (Ազգային բեստսելլեր) մրցանակի «Գարուն ռեպորտյորի համար» վեպով: 2020 թվականին Մաքսիմ Զամշևը «Կենցերտմայստեր» վեպով դարձել է Ֆյոդոր Աբրամովի անվան «Չիստայա կնիգա» («Մաքուր գիրք») մրցանակի դափնեկիր «Արդի արձակ» անվանակարգում և հաղթել է «Տարվա գիրք» ազգային մրցույթի «Տարվա արձակ» անվանակարգում:

2024 թվականին լույս է տեսել նոր բանաստեղծական ժողովածուն՝ «Ես հաշտ եմ ապրել հայրենի երկրիս հետ»: 2025 թվականին դարձել է Դ. Գրանինի անվան մրցանակի դափնեկիր «Ազատամիտները» վեպով «Մեծ արձակ» անվանակարգում:

Մաքսիմ Զամշևի ստեղծագործությունները թարգմանված են 15 լեզվով: Այժմ ֆրանսերեն է թարգմանվում նրա փոքր արձակի «Ես չեմ կարող այսպես ապրել» ժողովածուն:

КНИГИ ИЗ РОССИИ
ԳՐՔԵՐ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՑ
КНИГИ ИЗ РОССИИ
ԳՐՔԵՐ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՑ
КНИГИ ИЗ РОССИИ
ԳՐՔԵՐ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՑ
КНИГИ ИЗ РОССИИ
ИНСТИТУТ ПЕРЕВОДА
ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
READ RUSSIA
YEREVAN BOOK FEST 2025